

Սիրունի - Շոռճյանի

346

Կարապետյան զեկ




Քիժի

1910.

387

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԹԻՒՆ «ՀԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ




№ 16

Է. ՍԻՏՈՆ-ՏՕՄՊՍՕՆ

ԿԱԽԱԿԱՆՋԻԿԸ

Թարգմ. Կրճատումների Կոմ. Հիսիցեան



2004

Թ Ի Յ Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ (Ր. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7
1910

ՅԶ Մ.

Ս-42

ար


Է. ՍԻՏՕՆ-ՏՕՄՊՍՕՆ



ԿԱԽԱԿԱՆՋԻԿԸ

1002 9-
6585

Թարգմ. կրճատումներով Ստ. Լիսիցեան



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԷՔՏՐԱՉԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՈՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7
1910

ԿԱԽԱԿԱՆՋԻԿԸ

Մի նապաստակի պատմութիւն

I

«Կախականջիկ» ասում էին մի ջահել նապաստակի, որ իր մօր հետ ապրում էր ծերունի Օլիֆանտի ճահճում: Ծահճի ծայրին բուննող եղեգնուտը ծածկում էր այն տաք, յարմար բունը, որտեղ մայրը պահում էր իր միակ զաւակին: Զգոյշ ծածկում էր նա տղային փափուկ խոտերով, շարունակ կրկներով իր մայրական խրատը. «Հանգիստ պառկիր և ձայն մի հանիլ, ինչ էլ որ պատահի»: Կախականջիկը նազ էր անում իր տաք մահճակալի մէջ, բայց քնել չէր կամենում. իր խելօք աչիկներով նա զննում էր կանաչ աշխարհի այն անկիւնը, որ իր առջեւ էր բացւած: Այնտեղ, վերևում, մի կաշաղակ և մի սկիւռ, երկուսն էլ յայտնի խաբեբաներ, իրար գող էին կանչում. մուգ-կարմիր զատիկը՝ հաստ շօշափելիքները շարժելով, զբօսնում էր խոտի ցօղուններով վերև ներքև և սողաց Կախականջիկի ամբողջ բնով և ապա քթով: Բայց նա տեղից ժաժ չեկաւ, նոյնիսկ աչքը չը թարթեց, չը փրըշտաց: Մի քիչ յետոյ նա լսեց մի


տարօրինակ խշխշոց մօտիկ թփի տերևների տակից, միապաղաղ, անընդհատ, որ մէկ այս, մէկ այն կողմից էր գալիս: Խշխշոցը մօտենում էր, աւելի պարզ էր դառնում, բայց դրանք քայլեր չէին. կախականջիկը անց էր կացրել իր ամբողջ կեանքը—այդ ժամանակ արդէն երեք շաբաթական էր,—ճահճի մօտ, և դեռ երբէք մի այդպիսի բան չէր լսել: Հասկանալի է որ նրա հետաքրքրութիւնը շատ էր զրգուած:

Կախականջիկը վճռեց թէ ինչ պիտի անի. ինքը խօ երեխայ չէ, իր նապաստակային պարտականութիւնն է իմանալ թէ բանն ինչ է: Թէև մայրը ասել էր որ հանգիստ պառկի, նա կամացուկ վեր բաշեց իր փափուկ, կլոր մարմինը թաւամազ, կարճ ոտիկների վրա, հաստիկ գլուխը դուրս հանեց բնի անվտանգ պատնէշի ետևից և հետաքրքրութեամբ նայեց դէպի անտառը: Ոչ մի առանձին բան չը նկատելով, նա մի քայլ արաւ դէպի առաջ և տնկեց երես առ երես ահագին սև օձի առջև:

«Մայրիկ»,—ծւաց փոքրիկ նապաստակը սարսափահար, երբ հրէշը յարձակեց նրա վրա: Իր թոյլ ոտիկների վերջին ուժերը լարելով, նա փորձեց փախչել: Բայց կայծակի արագութեամբ օձը բռնեց նրա ալանջից և ազահ ցընծութեամբ սկսեց փաթաթել փոքրիկ, անպաշտպան մարմինն, համեղ ճաշի յոյսով:

«Մայրիկ, մայրիկ»,—խռխռաց խեղճ փոք-

րիկը, զգալով որ հրէշը իրեն խեղդում է շուտով, շատ շուտով կը լռէին փոքրիկ նապաստակի աղաղակները, բայց օգնութիւնը ժամանակին վրա հասաւ. երկար, յուսահատ ցատկումներով անտառից սլանում էր մայրը: Դա արդէն երկշոտ արարածը չէր, որ վախենում էր ամեն սաւերից. նրա մէջ զաթնել էր մայրական սէրը:



Հօպ, ցատկեց նա զգւելի սեղունի վրայով և զարնեց ամուր ու սուր ետեի ոտներով այնպիսի ուժով, որ օձը ֆշշաց զայրոյթից ու ցաւից:

«Մայրիկ»,—կամաց տնքաց նրա աչքի լոյսը: Եւ մայրը կրկնում էր իր ցատկումները, աւելի ու աւելի ամուր զարնելով օձին, մինչև որ սա բաց թողեց փոքրիկ նապաստակի ալանջը մօր վրա յարձակելու համար, բայց բրդի մի կտոր մնաց նրա տտափների մէջ: Շուտով մօր հարւածներից սև հրէշի զրահի վրա երևացին երկար, արիւնոտ բծեր:

Օձը կամենալով յարձակել մօր վրա մի քիչ թուլացրեց իր մարմնի օղակները, որ սեղմում էին ձագին երկաթէ ունեկիքների պէս. իսկոյն պստիկը դուրս պրծաւ ու անհետացաւ ցածիկ թփերի մէջ, հազիւ շունչը բերանում. միայն ձախ ականջն էր փնտռել օձի սուր ատամներին:

Մայրը իր նպատակին հասել էր. նա էլ անյայտացաւ անտառում: Բայց այդ դէպքից յետոյ նրա զաւակի մէկ ականջը միշտ կախ մնաց:

II

Ճահճի գլխաւոր բնակիչները Կախականջիկն էր ու նրա մայրը. նրանց ազգականները վաղուց է նախահայրերի մօտ էին գնացել և մօտակայքում ոչ մի հարկան չունէին: Անտառոտ ճահճը նրանց հայրենիքն էր, այստեղ էր անցնում նրանց անփառունակ նապաստակային կեանքը, այստեղ էլ կրթութիւն ստացաւ Կախականջիկը, որի շնորհիւ և դարձաւ օրինաւոր նապաստակ, որ արիւթեամբ լուծում է կեանքի բարդ խնդիրները:

Մեր փոքրիկը ունէր մի հոգատար մայր, որ աշխատում էր քանի կարելի է լաւ կրթել իր զաւակին: Առաջինը, ինչ նա սովորեցրեց, էր. «հանգիստ պառկիր ու ձայն մի հանի»: Օձին պատահելուց յետոյ Կախականջիկը լաւ հասկացաւ այդ խրատի խոր իմաստը, ամբողջ կեանքում նա չէր մոռանում այդ դասը և վարւում

էր դրա համեմատ, և մեծ մասամբ դա լինում էր ճիշտ. որ անվտանգ մնալու միակ միջոցը: Երկրորդ դասն էր «տապ անել» գիտենալը, դա բնականաբար բղխում էր առաջինից: Հէնց որ մեր նապաստակը սովորեց վազվզել, մայրը իսկոյն և եթ սովորեցրեց այդ արւեստը:

«Տապ անել» նշանակում է՝ չը շարժել, անշունչ արձան կտրւել: Երբ լաւ կրթւած նապաստակը նկատում է որ իրեն հետապնդում է մի թշնամի, նա կանգ է առնում և մնում է այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ որ եղել է, ամեն կերպ զգուշանալով մի փոքր դոնէ շարժւելուց: Քանի որ անտառի բնակիչները իրենց գոյնով նման են գետնի, ծառաբների և թփերի գոյներին, նրանք հետապնդողի ուշքն են գրաւում միայն այն ժամանակ, երբ շարժւում են: Եթէ երկու թշնամի իրար են պատահում անտառի առանձնացած շաւիղներին, առաւելութիւնը նրա կողմն է լինում, ով առաջինը կը նկատի թշնամուն. տապ անելով, նա կարող է անտեսանելի դառնալ և յարմար ըռպէ ընտրել յարձակւելու կամ փախչելու համար: Ով որ մօտիկից է ծանօթ անտառի և նրա բնակիչների կեանքին, կը հասկանայ այդ ուսմունքի կարևոր նշանակութիւնը: Ամեն մի գաղան ազատ, կանաչ անտառում և ամեն մի որսորդ պիտի իւրացնեն այդ ուսմունքը, և կենդանիները զարմանալի կատարելութեան են հասնում այդ բանի մէջ, բայց ոչ

մի կենդանի չէր կարողանայ այդ դէպքում հա-
ւասարել մեր նապաստակի հետ: Նա այդ արեւստը
սովորեցրեց իր զաւակին անձնական օրինակով:
Երբ նրա բնատուր սպիտակ բարձը — նրա յե-
տոյքը սպիտակին էր տալիս ծառերի միջին, կա-
խական ջիկը ամեն կերպ աշխատում էր ետ չը
մնալ նրանից. բայց եթէ մայրը յանկարծ կանգ
էր առնում և տապ անում, փոքրիկը բնականա-
բար կամենալով նրան նմանել, անում էր նոյնը:

Մայրը հաղորդեց զաւակին և նապաստակա-
յին խորագոյն իմաստութիւնը — մասրու հետ բա-
րեկամ լինելու գաղտնիքը: Բայց այդ գաղտնիքը
հասկանալու համար, անհրաժեշտ է գիտենալ
թէ ինչու մասրին թշնամի է բոլոր կենդանի-
ներին:

Աշխարհի ստեղծագործութեան միջոցին
մասրին փշեր չի ունեցել, բայց դժուար էր այն
ժամանակ նրա վարդերի կեանքը: Սկիւռն ու մուկը
հեծնում էին նրա ճիւղերով, ծաղիկները քաղում.
կովի պոզերը պոկոտում էին նրանց. երկզոյցը
վայր էր թափում իր երկար պոչի հարւածնե-
րով և եղջերուն տրորում էր քնքուշ ծաղիկնե-
րը ամուր սմբակներով: Դրա համար էլ մասրին
զինւեց սուր-սուր փշերով, որ պաշտպանի իր
վարդերը, և բոլոր կենդանիներին կռիւ յայտա-
րարեց: Միայն նապաստակներին հետ շարունա-
կեց հաշտ ապրել, որովհետեւ չեն իմանում հեծ-
նել, ոչ սմբակ ունեն, ոչ պոզ, ոչ երկար պոչ:

Եւ ճիշտ որ, ոչ մի նապաստակ մի վնաս չէր
արել մասրուն: Ահա թէ ինչու՝ շրջապատւած
լինելով այնքան բազմաթիւ թշնամիներով, մաս-
րին որդեգիր արաւ նապաստակին. եթէ
խեղճ նապաստակին որեւէ վտանգ է սպառնում,
նավագումէ մասրու մերձաւոր թփի մօտ, գիտե-
նալով որ թուփը իրեն կը սլահի ու կը պաշտպանի
իր հաղարաւոր սուր-սուր թունալից թրերով:

Այսպէս է ասում խորհրդաւոր աւանդու-
թիւնը մասրու և նապաստակի մէջ եղած անքակ-
տելի բարեկամութեան մասին:

Նախ և առաջ խելօք մայրը աշխատում էր
ծանօթացնել իր տղային շրջակայքի հետ, մա-
նաւանդ մոշուտի և տատասկի միջով անցնող
շաւիղների հետ: Հասկացող տղան միտն էր պա-
հում դրանց և շուտով սովորեց երկու զանազան
ճամփաներով տուն վերադառնալ ճահճի վրայով,
հինգ քայլից աւելի չը հեռանալով փրկարար
թուփերից:

Նորերս նապաստակների թշնամիները իրա-
ւացի գայրոյթով նկատել էին որ մարդիկ նոր
տեսակի տատասկի չափարներ են հնարել և նրան-
ցով ամբողջ այդ կողմերը շրջապատել են: Այդ
չափարները այնքան ամուր էին, որ ոչ մի գա-
զան չէր կարողանում նրանց կոտրել, և այն-
պէս սուր, որ անողորմ կերպով պատռում էին
ամենախիտ բուրդը: Տարեց տարի այդ չափար-
ները շատանում էին աւելի և աւելի, և ազատ

ընակիրչների վիճակը հետզհետե վատանում էր։ Միայն նապաստակը չէր փաստում այդ նորամուծութիւնից, նա հօ մեծացել էր մասրու թփերի մէջ, բայց շներն ու աղւէսները, կովերն ու ոչխարները, նոյնիսկ իրենք մարդիկ արիւնոտում, վիրաւորում էին սարսափելի փշերից։ Քանի աւելի հեռու էր տարածւում մինչ և այդ օրը անծանօթ տատասկի տեսակը մաւթուլը, այնքան աւելի անվտանգ էր դառնում այդ տեղը նապաստակների համար և այնքան աւելի հանգիստ էին տալում նրանք փշոտ մաւթուլի պաշտպանութեան ներքոյ։

III

Քանի որ նապաստակը ընդամենը մի հատ զուակ ունէր, ուռտի իր ամբողջ խնամքն ու սէրը նրա վրա դարձրեց։ Զարմանալի ճարպիկ, ուժեղ և խելօք ձագուկ էր։

Մայրը սաիպում էր նրան շարունակ դիտել անտառի գաղտնիքները. որ կերակուրը նրա մէջ լաւ և օգտաւէտ առողջութեան համար, որը փնտաւար։ Օրէցօր աշխատում էր նրան զարգացնել, մի օրինաւոր նապաստակ շինել նրան և նրա գլուխը լցնում էր հարիւրաւոր ծրագիրներով՝ ճարպիկութիւններով և հմտութիւններով, որ ինքը ձեռք էր բերել դառը փորձով և իր անձնական լաւ կրթութիւնով։

Յաճախ նստում էր տղան մօր կողքին առոյտի

(սիրի-սիրի) դաշտում կամ անտառի խորքում, նրա պէս սրբելով քիթը՝ և նրա դնչից քաշում խոտի ծիւերը կամ նրա շրթունքները լիզում համոզելու համար, որ իր կերակուրն էլ նոյնն է, ինչ որ մօրը։ Սովորում էր ականջները դրստել, մուշտակը իստակել, ոտների և կրծքի վրայից բրդի աւելնող մազերը հեռացնել։ Շուտով նա իմացաւ որ մասրուտերէների ցօղը, միակ նապաստակին վայել խմիչքն է, որովհետև գետնին դիպչելով՝ ջուրը որևէ համ է պոռնում։ Ահա անտառային գիտութեան, բոլոր գիտութիւններից ամենահին տարրական հասկացողութիւնները։

Երբ կախականջիկը այն հասակի դարձաւ, որ կարող էր մենակ շրջել անտառում, մայրը սովորեցրեց նրան նշան տալու արւեստը։ Նապաստակները իրար բան են իմացնում, զարնելով ետևի ոտները գետնին, և նապաստակի թաթերի թրխկթրխկոցը կարելի է լսել մօտ յիսուն սաժէն հեռաւորութիւնից, այսինքն՝ Օլեֆանտի ամբողջ ձահճի միւս կողմից։ Մի բաղխիւնը նշանակում է «գգոյշ եղիր» կամ «տապ արա», երկուսը ընդմիջումով «եկ», երկու արագ-արագ բաղխիւնները նշանակում է «վտանգ կայ», իսկ երեք արագ-արագը՝ «փախիր, կեանքդ փրկիր»։

Մի հրաշալի առաւօտ, երբ բուերը իրար հետ կուռում էին ճիւղերի վրա, — դա մի հաստատ նշան է որ վտանգ չը կայ — կախականջիկը նոր դասով էր զբաղւած։ Մայր նապաստակը ականջ-

ները սեղմել էլ գլխին. դրանով հրամայում էր պառկի. յետոյ փախաւ բաւականի հեռու և խռտութեան մէջ թաք կենալով, թրխկթրխկացրեց՝ եկ: «Տղան արագ սլացաւ, բայց չը գտաւ մօրը. թրխկ» թրխկացրեց, բայց պատասխան չը կար: Ուշադրութեամբ գետինը հոտոտելով, նա գտաւ մօր ոտների հետքերն և դրանց հետևելով գտաւ մօրը, որը թաք էր կացել մի ծածուկ տեղ:

Այսպէս էր նրա առաջին դասը հետախուզելու ուսմունքից, որը վերջը յաջորդ օրերում շատ և շատ կարևոր օգուտներ տւաւ նրան: Մօր սպասածից էլ առաջ նա իւրացրեց նապաստակային կացութեան համար անհրաժեշտ բոլոր ճարպիկութիւններն ու հնարները:

Շատ քիչը կը գտնւէր նրա նման ծառեր և բոյսեր ճանաչող, մի կողմ յանկարծ ցատկելու կամ տապ անելու շնորհք ունեցող, գիտէր ամեն արգելքներին յաղթել, քամու ուղղութեան ամեն փոփոխութիւնից օգտուել և մեռած ձեւաւ ախպրի ճարպկութեամբ, որ ամեն ուրիշ հնար նրա համար աւելորդ էր: Առանց մայրական խրատի նա հասկացաւ, ինչպէս իր օգտին ծառայեցնի փշոտ մաւթուլը:

Հետապնդողների աչքերին ու քթին աւագ ցանել նրա ամենասիրած միջոցն էր. իմանում էր ցատկել չափարների վրայից, պտոյտներ անել և որջերի մէջ թաքնւել—այս վերջինիս մասին յետոյ կը խօսեմ: Բայց այնուամենայնիւ

նա մտքից չէր գցում, որ «տապ անելն» ու հանգիստ նստելը, ամեն իմաստութեան սկիզբն է և որ իր համար ամենավստահելի ապաստարանը մասրու թփերն են:

Դեռ մատաղ օրերից մայրը սովորեցրեց նրան զանազանել հալածողներին ու թշնամիներին և հաղորդեց այն հնարները, որոնցով կարելի է նրանցից սրան կամ նրան խաբել: Բուերը, աղւէսները, շները, կզաքիսները, ժանտաքիսները, կատուները, ճուռակները, ջրարջերը, և մարդիկ—ամենքն էլ իրենց եղանակն ունեն յարձակւելու, և ամեն մէկի դէմ խելօք ուսուցչուհին գործում էր համապատասխան կերպով:

Շատ կարևոր էր իմանալ թշնամու մօտենալու ժամանակի մասին. այդ բանում կախանջիկը յոյսը դրել էր իր և իր մօր վրա և յետոյ ճայի վրա: «Երբէք չարհամարհես ճայի նախազգուշացնող ձայնը:»— խրատում էր իմաստուն մայրը: «Ճշմարիտ է, ճայը բամբասասէր է և գող, բայց նրա ուշադրութիւնից ոչ մի բան չի վրիպում: Նա շատ սիրով մի վատութիւն կանէր մեզ, բայց մասրու դիմաց անգօր է, և որովհետև մենք և ճայը միևնոյն թշնամիներն ունենք, ուստի երբէք աչքից բաց չը պիտի թողնենք նրան: Երբ լսես փայտփորիկի նախազգուշացումը, կարող ես նրան հաւատալ. նա ազնիւ և բարի հարևան է, բայց նա ոչինչ է ճայի հետ համեմատած և թէև ճայը, անպիտանը, յա-

ճախ սուտ է ասում, կամենալով մի փորձանք բերել, այնուամենայնիւ նրան պէտք է հաւատալ, երբ վատ համբաւ է բերում:»

Հարկաւոր է ամուր շղեր և ճարպիկ ոտներ ունենալ փշոտ մաւթուլի շարքերի վրայից ցատկելու համար: Կախական շիկը սիրտ առաւ այդ անելու այն ժամանակ, երբ մի քիչ հասակ առաւ, բայց այնուհետեւ այդ տեսակի վարժութիւնը նրա սիրելի զարճութիւնը դարձաւ:

«Այդ շատ է ուրախացնում նրան, ով որ իր գործը գիտի»,— ասում է մայր-նապաստակը: «Նախ վազիրը շան առջևից միշտ ուղիղ, որ մի քիչ տաքանայ կամենալով քեզ բռնել: Երբ քեզնից մի ցատկումի հեռաւորութեան վրա կը լինի, մի կողմ թեքւիր, մեծ պտոյտ արն և յետոյ թռիւր բարձր մաւթուլէ ցանկապատի վրայից: Շատ անգամ աեսել եմ՝ ինչպէս աղւէսը կամ շունը ընդմիշտ հաշմանդամ են դարձել, իսկ մէկ անգամ ահագին թագին տեղն ու տեղը մեռած մնաց:»

Կախական շիկը շատ վաղ սովորեց այն, ինչ որ մի ուրիշ նապաստակ ամբողջ կեանքում չի կարողանում— «ծակը մտնելու» արւեստը. դա մի թեթեւ գործ չէ: Յաճախ դա լինում է փրկութեան վերջին միջոցը խելօք նապաստակի համար, և կորուստ անխելի համար: Զահել նապաստակը նախ և առաջ մտածում է այդ միջոցի մասին, չը փորձելով մէկ ուրիշը. իսկ փոր-

ճաւծը այդ հնարին դիմում է միայն ծայրայեղ դէպքում: Այդ միջոցով նա կարող է փրկւել մարդուց կամ աղւէսից, բայց եթէ հալածում է կզաքիսը կամ ժանտաքիսը— նա կորած է:

Ծահճում երկու որջ կար: Մէկը գտնւում էր չոր հողէ բլրի տակ, բացւում էր դէպի հարաւ և ունէր թեք մուտք: Պայծառ օրերին նապաստակի ընտանիքը սիրում էր այստեղ արևի շողերի տակ տաքանալ: Մամուռի և եղևնու փշերի փափուկ անկողնու վրա պառկած՝ նրանք ձգւում և ոլորում էին իրենց անդամները կատունների պէս և կամաց շուռ ու մուռ էին դալիս մէկ կողքից միւսը, ինչպէս խորովածն են շուռ ու մուռ տալիս շամփուրի վրա, որ ամեն կողմից լաւ խորովւի: Նրանք աչքերը թարթում էին, փշտացնում, ոլորում, կարծես ամենասոսկալի ցաւեր զգալիս լինէին, իսկ իրօք հոգով մարմնով զարճանում էին: Չար արջամուկն էր այդ որջը փորել հողէ բլրի մէջ, դեռին տապալւած էին եղևնու բնի տակ: Այդ մուռը մենաւորը օրէցօր դառնում էր աւելի և աւելի անսիրալիք ու բարկացկոտ և մի օր այնտեղն էր հասել, որ կպաւ Օլիֆանտի շան հետ, չը կամենալով ժամանակին նրանից խոյս տալ: Մի ժամից յետոյ մայր-նապաստակը տիրացաւ նրա պարապ մնացած որջին: Միւս որջը ձառխոտի թփի տակն էր փորւած և գտնւում էր առոյտի դաշտից ոչ հեռու: Նեղ էր ու խոնաւ, բանի պէտք չէր,

ապաստան կարող էր լինել միայն ծայրայեղ նեղ դէպքում: Սկզբում նա էլ պատկանում էր մի արջամուկի, մի բարեացակամ և սիրալիր հարևանի, բայց նրան փչացրեց երկշոտութիւնը, և Օլիֆանտի բանւորը նրա կաշին գործածեց իր մտրակի փոկը՝ երկարացնելու, մտրակի, որով բշուժ էր տիրոջ ձիերին:

Այդ բանից յետոյ Կախականջիկն ու նրա մայրը երկու որջերի միակ սեփականատէրերը դարձան, բայց նրանցից օգտւում էին ինչքան կարելի է սակաւ, վախենալով շաւղի նման մի բան թողնել, որը պիտի կարողանար թշնամիներին ու հետապնդողներին այդտեղ բերել:

Այնտեղ գտնւում էր նոյնպէս մի հին ընկուզի ծառ, որը ամեն տարի կանաչ սաղարթով էր ծածկւում, չը նայելով որ տապալւելու վրա էր և ունէր անագին ծակ-փշակ: Այդ յարմար բնակարանի տէրը երկար ժամանակ մի ծեր ջրարջ էր: Ամբողջ կեանքը նա գորտ էր որսում, կարծես մենակեաց աբեղայի նման մսի համից հրաժարւելիս լինէր: Սակայն նապաստակները կասկածում էին որ տեղն եկած ժամանակ նա չի գարձի իրենցից մէկից: Եւ իսկ որ, մի գիշեր նա մահի արժանացաւ Օլիֆանտի ձեռքից, որովհետեւ բռնել էր հաւատունը մաքրագարդելիս: Հիմա մայր-նապաստակը կարող էր տիրանալ նրա յարմար տնակին, ոչ միայն չափսոսալով նրա մահւան վրա, այլ նոյնիսկ մի թեթևութիւն գգալով:

IV

Օգոստոսի պայծառ արևը իր շողերն էր թափում ճահճի վրա, կարծես ամեն տերև լողանում էր. ջերմ լոյսի մէջ: Նապաստակները տեղաւորւել էին առոյտի դաշտի մօտ համեղ ճաշի յոյսով: Յանկարծ նկատեցին մի կարմրապոչ ճուռակ, որնետի պէս սլանում իրենց վրա: Մայրը ետևի ոտները օդի մէջ թրխկացրեց՝ գիշատիչին ծաղրելու համար և իսկոյն թաքնւեց տատասկոտ մամխի թփի տակ: Լաւ գիտէր որ ճուռակը չի համարձակւի իր ետևից այնտեղ մտնել: Մամխին բուսել էր հին, թողած ճամփի մօտ, պատատւող բոյսերը ծածկել էին ճամփան. և՛ աչքից բաց չը թողնելով ճուռակին, մայր նապաստակը սկսեց կրծոտել այդ բոյսերի ճիւղերը: Կախականջիկը մի առ ժամանակ հետևում էր նրան. յետոյ նա էլ առաջ վազեց և նոյնը սկսեց անել: «Այդ լաւ է», առաւ մայրը. հոգացիր որ ճամփա ունենաս փախչելու համար. լայն ճամփաները մեզ պէտք չեն, բայց նրանք չը պիտի խոպանանան, դեռ շատ անգամ նրանք պէտք կը գան: Ուշի ուշով կրծոտիր այս պատատւող անպիտան ճիւղերն և վերջը կը համոզւես որ թակարդ ես ոչնչացրել»:

«Ի՞նչ է թակարդը», — հարցրեց Կախականջիկը, քորելով ետևի ձախ ոտով աջ ականջը:

«Թակարդ կամ ծուղակ», բացատրեց մայրը:

1001
959

րը, ժամանակ առ ժամանակ արագ հայեացք գցելով այժմ հեռու նստած ճուռակի վրա, «արտաքուստ շատ է նման այս պատատուղ բոյսի ճիւղերին, բայց չի մեծանում, աշխարհիս բոլոր գիշատիչ թռչուններից էլ վտանգաւոր է: Գիշեր ցերեկ ճամփին ընկած է անտեսանելի, սպասելով մի դէպքի, որ բեզ բռնի»:

«Միթէ կարծում ես որ ինձ կը բռնի», — հարցրեց Կախականջիկը երիտասարդական յանդգնութեամբ, ձգւելով պճեղների վրա կզակն ու բեխերը ջահել ծառի ողորկ բնին քսելու համար: Նա այդ արաւ անդիտակցօրէն, բայց մայրը մէկ անգամից հասկացաւ որ իր զաւակը այլ ևս մանուկ չէ և շուտով հասակաւոր նապաստակների շարքը կը մտնի:

V

Կենդանի կարկաշուն ջուրը լի է հմայքով: Ո՛վ չը գիտէ նրա հրապոյրը, ո՞վ չի տարւում այդ հրապոյրով:

Կենդանի, հոսուն ջուրը խորհրդաւոր ուժ ունի. ամենամեծ վտանգի ժամանակ օգնութիւն փրկութիւն ես գտնում նրա մէջ. անտառի ազատասէր քաղանք անգիտակցօրէն նրա մօտ է վազում, երբ մահացու թշնամին ընկած է լինում ետևիցը: Ամեն հնար և խորամանկութիւն բանեցրել է, ուժերը սպառել է, բայց բարի բասոր

բերում է նրան ջրի մօտ. կենդանի, ուրախ վազող ջրի մօտ, և նա մէջն է նետւում և լողում է զով հոսանքով և դուրս է գալիս նրա միջից թաքմացած, նոր ուժ առած՝ կռիւը շարունակելու համար:

Կենդանի ջրի մէջ ինչոր կախարդական բան կայ: Երբ շները հալածանքի ժամանակ այդպիսի մի խոչընդոտի են պատահում, սախաւած են լինում վազքը դադարեցնել. որոնում են հետքը, բայց որոնում են իգուր: Դէպի ցած սլացող հոսանքը իր հետ է տարած լինում խեղճ, հալածւած կենդանու հետքը. նա փրկւած է, ազատ է:

Ահա այլ ևս մեծ գաղտնիքներից մէկը, որ Կախականջիկը իմացաւ իր մայրիկից. «մասրուց յետոյ քո ամենալաւ բարեկամը — ջուրն է»:

Մի օգոստոսեան գիշեր, երբ ամեն ինչ փութորիկ էր նախագուշակում, մայրն ու զաւակը փախչում էին տուն, մայրը առջևից, ինչպէս միշտ: Նրանք հասան ճահճի լճի ափին: Ծառերի գազաթներին թռչունները վերջացնում էին իրենց երեկոյեան երգը. գէթ գորաւ՝ ջրի միջից դուրս ցցւած մենաւոր կոճղի վրա նստած և մինչև կզակը զով ջրի մէջ խորասուզւելով՝ կռոււում էր ինչքան ուժ ունէր — դա էլ նրաներբողական երգն էր:

«Հետևիր ինձ, որդի», — ասաւ մայրը նապաստակի լեզուով. — և չը մփ, թուա ջուրը և արագ շարժումներով լողաց հասաւ մենաւոր կոճ-

ղին: Կախականջիկը սկզբում տատանւում էր, բայց յետոյ նա էլ նետւեց ջուրը: Կամացուկ վշշալով, նա սկսեց քթին զօռ տալով արագ արագ օգնել, շնչել, բայց ամեն կերպ նմանեցնում էր մօր շարժումներին: Առաջ գնալով ջրի մէջ էլ այնպէս, ինչպէս ցամաքի վրա, նա լողում էր առաջ և առաջ, մինչև որ հասաւ կոճղին ու մազլցեց նրա աւելի չոր բարձր ծայրը, որտեղ նստած էր մայրը: Ջուրը նրա մորթուց կամաց կաթկթում էր լիճը: Նրանց շրջապատում էր ազատ խշխշող անտառի պատը և ոչ մի գաղտնիք չը մատնող ջուրը:

Վերջը, երբ խաւար, տաք գիշերները պառաւ աղւէսը ճահիճն էր գալիս օրս անելու, Կախականջիկը միշտ միտն էր բերում այն տեղը, որտեղ երգում են գորտերը. նեղ ընկած տեղը նա այնտեղ էր փրկւում: Այդ օրից ի վեր գորտերի երգի մէջ լսում էր բռներ, «փախիր, փախիր», երբ վտանգի մէջ լինես, փախիր մեզ մօտ»:

Դա վերջին դասն էր, հոգատար մայրը տրւաւ Կախականջիկին: Մօր օգնութեամբ նա իւրացրեց նապաստակային ամբողջ իմաստութիւնն, իսկ դրանով կարող էին պարծենալ նապաստակներից շատ քչերը:

VI

Անտառի բնակիչների կեանքը սակաւ է ծերութիւնից վերջանում. սովորաբար նրանք,

վաղ թէ ուշ, մեռնում են բոնի մահով, և ամբողջ բանը նրանումն է թէ ինչքան երկար կը կարողանան դիմադրել իրենց թշնամիներին: Բայց Կախականջիկը գործով ապացուցեց, որ մէկ որ նապաստակը աջողութեամբ չափահասէ դարձել, մեծ մասամբ միայն կեանքի վերջին երրորդութիւնն է թշնամուց կորչում, երբ ուժերը արդէն սկսում են իրեն դաւաճանել:

Մեր նապաստակային ընտանիքը ամեն կողմից շրջապատւած էր թշնամիներով. ամեն օրը մի մի նոր օղակ էր աւելանում նրանց կեանքը կազմող փորձանքների և հալածանքների շղթայի վրա: Ոչ միայն շները, աղւէսները, կատուները, ջրարջերը, աքիսները օձերը, գիշատիչ թռչունները և մարդիկ, այլ և թունաւոր միջատները շարունակ դաւադրութիւն էին կազմում նրանց դէմ: Հազար ու մի արկածների էին հանդիպում, և օրէնք գոնէ մէկ անգամ ստիպւած էին լինում իրենց կեանքը փրկել փախուստով և փրկւում էին միմիայն իրենց հոտների աջութեան և մտքի սրութեան շնորհիւ: Բանի քանի անգամ խորամանկ աղւէսը ստիպել է նրանց թաք կենալ աղբիւրի մօտ ամայի խողատան մէջ, փշոտ մաւթուկի ետև, բայց մէկ որ այնտեղ էին, կարող էին հանգիստ մտիկ տալ նրա գուր ջանքերին իրենց հասնելու. աղւէսը ստիպւած էր լինում ետ դառնալ արիւնոտած թաթերով:

Մէկ անգամ այնպէս եղաւ որ Կախականջիկը ընկաւ որսորդի ճանկը, որին օգնում էին լաւ շունն ու ընտելացրած աքիսը, բայց յաջորդ օրը նա ծըլկեց և ընդմիշտ խոր անվստահութիւն պահեց դէպի որջերի ապահով լինելը: Քանիցս անգամ խոյս էր տւել կատուից շուր մտնելով, քանիցս անգամ իրեն հալածել էին ճուռակներն և բուերը, բայց միշտ ազատւելու հնար էր գտնում:

Մայրը սովորեցրել էր նրան բոլոր խորամանկութիւններն ու հնարները, որ ինքը գիտէր, և երբ տղան հասակն առաւ, կատարելագործեց իր սովորածները և դեռ նորերն էլ հնարեց: Քանի աւելի մեծանում էր և լըջմիտ էր դառնում, այնքան աւելի քիչ յոյս էր դնում ոտների արագութեան վրա և այնքան աւելի ապուշնում իր խելքին ու փորձառութեանը:

Օտերը ու մալրում էր մի ջահել թագի շուն, որին տէրը յաճախ վարժեցնելու համար նապաստակի հետքին էր քստում: Անունը Դմբօ էր: Ամենից յաճախ նա հետամուտ էր լինում Կախականջիկին, սա էլ մի հաճոյք էր զրտնում այդ հալածանքի մէջ, ոչ պակաս, քան Դմբօն: Կախականջիկը ասում էր, «մայրիկ, ահա նորից այն շունը կերթամ կը վազվզեմ նրա հետ»:


«Շատ ես ինքնավստահ, դաւակն պատասխանում էր մայրը, սիրտս զգում է որ մի փորձանք ես բերել ու գլխիդ»:

«Բայց, մայրիկ, յիմար շան ջգրացնելուց աւելի մեծ դարձութիւն կայ որ, մանաւանդ երբ դա առողջարար վարժութիւն է»:

Եւ դուրս էր թռչում ուղղակի ճամփան: Դմբօն իսկոյն ետեւիցն էր ընկնում և հալածում էր նապաստակին, մինչև որ սա յոգնելով չէր թրխկթրխկացնի ու օգնութեան չէր կանչի մայրիկին: Պատահում էր որ ինքն էլ իր հնարամտութեամբ շանը խելքահան էր անում. տեղի լաւ ծանօթութիւնը շատ էր նրան օգնում:

Պատմենք մի այդպիսի դէպքի մասին:

Կախականջիկը գիտէր, որ իր հետքերի հոտը աւելի է մնում գետնի վրա և աւելի սաստիկ է լինում, երբ ինքը տաքացած է լինում. այնպէս որ եթէ աջողւէր մի կէս ժամ մնալ ոչ գետնի վրա և սառչել, ինքը այլևս վտանգից ազատւած կը լինէր: Դրա համար էլ մէկ անգամ, երբ յոգնել էր հետապնդումից, շտապեց A. կէտից դէպի B, C մասրիները, ուր սկսեց պտոյտներ անել և



խճճել իր հետքը, այնպէս որ շունը շատ ետ մնաց ոտտնելով և աշխատելով իմանալ, թէ ուր փա-

խաւ նապաստակը: Դրանից յետոյ նա գնաց դէպի անտառը, ճամփին ցատկելով **Է** գերանի վրայից: Կանգնելով **Ը**-ի մօտ, նա վազեց իր հետքերով դէպի **Լ**, այստեղ ցատկեց մի կողմ և դիմեց **Տ**: Ապա նորից վերադարձաւ իր նախկին հետքի մօտ և սպասեց, մինչև որ շունը նրա հետքերով վազեց



մինչև **Լ**. այն ժամանակ նա հասաւ մինչև **Ի**. և իր հին հետքերով շարունակեց վազել դէպի **Է**, որտեղ ցատկեց գերանի վրա, վազեց նրա վրայով մինչև միւս ծայրը և նստեց այնտեղ անշարժ: Շունը երկար ժամանակ կորցրեց մասրիների մէջ և հազիւ հազ հասաւ **Ը**, թոյլ տալով որ հետքերը սառչեն: Վերջապէս երկար որոնումներից

յետոյ նա նորից գտաւ նապաստակի հետքը, մինչև որ վերջապէս եկաւ գերանի մօտ: Բայց սառած հետքը ցուրտ օրը հեռու չի տանի: Նապաստակը անշարժ կծկւել էր և թաղին սլացաւ կողքից: Բայց և շուտով վերադարձաւ, հոտոտեց գերանի ստորին ծայրը, դէս ու դէն շրջելով: Անշուշտ նապաստակի հոտ էր: Թէև հոտը թոյլ էր, այնուամենայնիւ շունը գնաց գերանի երկարութեամբ: Նապաստակը արիւթթիւնը չէր կորցնում, քամին նապաստակը կողմից էր փրչում, և նա չէր մտածում փախչելու: Շունը հազիւ հասաւ գերանի կէսին և շուտ եկաւ ետ, չը նկատելով փոքրիկին: Սա ցատկեց գերանի վրայից, վազեց, թագնեց, իր յաղթանակը տօնելով:

VII

Մեր նապաստակները այնքան հին բնակիչներ էին Օլիֆանտի ճահճի, որ իրենց տէր էին համարում այդ կողմերի մինչև հեռաւոր սահմանները և ամենածածուկ պուճախները, նաև Օլիֆանտի տուն ու տեղի: Եթէ նրա բախում մէկ ուրիշ նապաստակ լոյս ընկնէր, այդ բանը նրանք մեծ վիրաւորանք կը ճանաչէին իրենց համար:

Յունւար ամիսն էր: Ձիւնը սկսել էր հալւել: Օլիֆանտը օգտւելով այդ օրերից՝ կտրում էր ճահճի լճի ափին գտնւած դարևոր անտառի վերջին վիթխարի ծառերը: Եղանակը գեղեցիկ էր

ու տաք: Մայր-նապաստակը՝ գգալով ոսկրացաւի կրկնութիւն, գնաց առողջարար խոտ որոնելու, մինչդեռ որդին տաքանում էր արևի տակ: Հեռուում երևում էր Օլիֆանտի տունը իր ծխող ծխնելոյզով և գորշ ախոռով:

Քամին բերում էր Օլիֆանտի տաւարի ուռճալու ղփրտոցը, իսկ տաք ծուխի հետ տարածուում էր ամեն տեղ կաղամբի հոտը, և Կախականջիկը հասկացաւ որ տանու տաւարը կերակրում են կաղամբի տերևով: Բերնի թոււքն էր վազում այդ կերակուրը միտը բերելուց, մանաւանդ որ ձմեռը շատ անգամ սոված էր մնացել, և նախանձով այն կողմն էր նայում, որտեղից գալիս էր այդ գայթակղիչ անուշահոտութիւնը, չէ՞ որ կաղամբը նրա ամենասիրած կերակուրն էր: Բայց նախորդ գիշեր նա արդէն Օլիֆանտի բակում առոյտի համը վայելել էր, իսկ խելօք նապաստակը չի գնայ անուշ չի անի միևնոյն տեղ երկու գիշեր իրար ետևից: Գայթակղութիւնից խոյս տալու համար, Կախականջիկը այնքան հեռու քաշւեց, որ կաղամբի հոտը այլևս չէր գրգռում էր նրա քիթը և ընթրիքին բաւականացաւ մի փունջ խոտով, որ քամին դէպից պոկել բերել էր: Երբ գնում էր հանգիստ առնելու, նրան միացաւ մայրը:

Մինչ այդ արևը մայր մտաւ, ուրիշ տեղ լոյս տալու համար: Արևելքից բարձրացաւ խիտ ու սև վարազոյր, որ հետդհետէ մեծանալով ծած-

կեց ամբողջ երկինքը, ծնեց խաւար, և աշխարհը դարձաւ մութ և ամայի: Արևի բացակայութիւնից օգտւելով, վեր կացաւ չարագործ քամին, իր հետ բերելով շփոթ և երկիւղ: Շուրջը աւելի ցուրտ և անհիւրընկալ էր դառնում, քան թէ առաջ էր, երբ ձիւնը դեռ ծածկում էր գետինը:

«Այս ի՜նչ ցուրտ և անախորժ գիշեր է», — առաւ Կախականջիկը. «ափսոս որ չը կայ հին ցախի մեր առաջւայ կոյտը: (Օլիֆանտը այդ կոյտը տարել այրել էր):

«Ճիշտ է, ճիշտ», պատասխանեց մայրը. «երանի այս գիշեր նստած լինէինք մեր որջի մէջ եղևնու տակին: Բայց այնտեղ աէր է դարձել ջրարջը. վտանգաւոր է այնտեղ ներս մտնել»:

Ծակ-փշակաւոր ընկուզի ծառը անյայտացել էր. նա ընկած էր Օլիֆանտի բակի մի անկիւնում և ջրարջը նրա փշակումն էր այդ գիշեր ապաստան գտել, բայց այդ չը գիտէին մեր նապաստակները, և մայր ու որդին գնացին լճի հարաւային ափը, մտան այնտեղ ցախակոյտի տակ և մի կերպ սարքւեցին: Քթերը դուրս էին ցցել հակառակ կողմերը, այնպէս որ հարկ եղած դէպքում կարող էին զանազան ուղղութեամբ փախչել: Քամին աւելի ու աւելի սաստկանում և ցրտում էր. կէս գիշերին մանր, ծակծրկող ծիւն եկաւ, որ թափանցում էր չոր տերևների ու մերկացած ճիւղերի միջով: Բուք ու

բորան էր: Թուում էր թէ այդպիսի մի գիշեր շատ էլ յարմար չէր որսի համար, սակայն պառաւ աղւէսը տանից դուրս էր եկել: Թփերի հովանու տակ նա գալիս էր դէպի ցախերը, քամուն դէմ ու դէմ, յանկարծ զգաց նապաստակի հոտը: Մի րոպէ կանգ առաւ, յետոյ սկսեց զաղտնագողի առաջ գնալ դէպի ցախակոյտը, յոյս ունենալով երկուսին էլ մէկ անգամից բռնելու: Բութի ձայնը նապաստում էր իրեն, և նա շատ մօտիկացաւ, երբ տերեւի խշխշոցը նրա զգոյշ քայլերի տակից զարթեցրեց մայր-նապաստակին: Նա շփեց որդու բեխերը և երկուսն էլ ոտքի վրա էին արդէն, երբ աղւէսը վրաները նետուեց: Պառաւ խաբեբան աչքից բաց էր թողել այն, որ նապաստակները քնած տեղն էլ ոտները պատրաստ են պահում ցատկելու: Աղւէսը անաշոյց ցատկեց, մայր-նապաստակը փախաւ, և չարագործը ետեւիցն ընկաւ, մինչդեռ կախականջիկը հակառակ կողմն էր վազում:

Մայր-նապաստակը մի ճամփա միայն ունէր իր առջև—նա սլացաւ ուղղակի քամուն հակառակ, կտրեց ճահիճը, որը չէր պահում աղւէսին, այնպէս որ նապաստակը մի քիչ աւելի առաջ անցաւ և հասաւ լճի ափին: Այստեղ էլ ընտրութիւն չը կար: Նա անցաւ բարձր եղեգնուտի միջով և մէկ ցատկով մոկնետուեց խոր ջուրը: Աղւէսը ետևիցը թռաւ, բայց ջուրը շատ սառն էր նրա համար և նա ետ դարձաւ: Նա-

պաստակը արագ լող տաւ դէպի դիմացի ափը: Բայց դէմու դէմից փչում էր սաստիկ քամին. կարճ, սառցապատ ալիքները ծփում էին նրա գլխի վրայից, ջուրը լցւած էր ձիւնով, որը ճամփան էր արգելում լողացող սառուցի նման: Փըր-



կարար ափի մոլգ գիծը անքան հեռու էր, և գուցէ այնտեղ իրան արդէն սպասում էր աղւէսը:

Ականջները ամուր սեղմելով մէջքին՝ քամուն աւելի քիչ դիմադրութիւն անելու համար,

նա արագ լող տւաւ քամուն և հոսանքին ընդառաջ: Շատ դժւար էր այդպէս երկար լող տալ սառը ջրի մէջ, բայց նա գրեթէ արդէն հասել էր լճափի եղեգնուտին, երբ լողացող ձիւնի մի հաստ շերտ ճամփան կտրեց: Քամին չարակամութեամբ ոռնում էր մերձաւոր փին սոված աղէսի պէս, և այդ ոռնոցը զրկում էր նրան ուժից ու արիւնքութիւնից: Զուրը նրան հեռու ետ տարաւ, առաջ քան նա կարողացաւ ձիւնը ճեղքել:

Նորից լող տւաւ նա, բայց դանդաղ, դանդաղ և երբ վերջապէս հասաւ բարձր եղեգնուտին, նրա մարմնի անդամները կոնկոռնել էին, ուժերը սպառւել, քաջարի սիրտը թոյլ էր բարխում, և նրա համար միևնոյն էր՝ սպասում է իրեն աղէսը թէ ոչ: Աջողութեամբ անցաւ եղեգնուտի միջով, բայց երբ հասաւ նենգաւոր պատատւող բոյսերին, ուժերը դաւաճանեցին, շարժումները սաստիկ թուլացան և չէին կարողանում ափ հանել նրան. շուրջը սառուց էր հաւաքւում: Մի քանի բոպէից յետոյ նրա ցրտատար թաթերը դադարեցին շարժելուց, թաւամազ դնչիկը այլ ևս չէր ցնցւում և նրա անուշ շագանակագոյն աչիկները յաւիտեան փակւեցին:

Մինչ այդ աղէսը չէր սպասում նրան ափին: Կախականջիկը մի քիչ ուշքի գալով՝ վերադարձել էր աղէսի ուշքը իր վրա գրաւելու և այլպիսով մօրը օգնելու համար: Նա հանդի-

պել էր պառաւ աղէսին լճի միւս ափին, բաշել տարել էր թաւ անտառը և բաց թողել խոր վէրքը գլխին փշոտ մաւթուլից: Յետոյ եկաւ լճի ափին, սկսեց որոնել, և՛ հոտոտել, և՛ թրբիկ-թրիկացնել. բայց զուր էին նրա որոնումները. մայրիկին նա չը գտաւ, և ոչ ոք չը պիտի կարողանար նրան բացատրել, ուր էր նա անհետացել, իսկ նա, մայրը, քնած էր վերջին քնով իր բարեկամ ջրի սառցէ գրկի մէջ, որը ոչ մի գաղտնիք չի մատնում:

Խեղճ նապաստակ: Նա մի ճշմարիտ հերոսուհի էր, բայց այն քչերից, որոնք հերոսի անւան ետեից չեն ընկած, այլ հնարաւոր օգուտն են բերում իրենց կեանքում և հեռանում են այս աշխարհից առանց փառքի: Նա քաջութեամբ կուռւում էր իր գոյութեան համար և մի նիւթից էր հիւսւած, որ չի մեռնում: Կախականջիկը նրա մարմնի մարմինն էր և նրա ոսկորի ոսկորը. մայրը իր զաւակի մէջ էր շարունակում ապրել, նրա միջոցով էր իր սերունդը լաւացնում...

Կախականջիկը դեռ էլի ապրում է իր ճահճում: Օլիֆանտը հէնց այդ ձմեռը մեռաւ. նրա ժառանգները այդ տեղերը թողին, և մէկ տարւայ մէջ ճահիճը դառաւ անանցանելի թաւ անտառ, իսկ փշոտ մաւթուլը տեղ տեղ պատուելով՝ ամուր ապաստարաններ է կաղմել, ուր չեն կարողանում մտնել աղէսն ու շունը: Այնտեղ մինչև օրս էլ ապրում է Կախականջիկը: Նա մի խոշոր ուժեղ նա-

պատակ է և չի վախենում Թադեաններէց. ու-
նի բազմանգամ ընտանիք և սիրուն, շիկամազ
կնիկ, չը գիտեմ՝ որտեղ է գտել: Երեւի, նա և
նրա սերունդը դեռ երկար տարիներ կապրեն
այնտեղ: Ով ճանաչում է նրանց նշանները և՛ ի-
մանում է նրանց հասկանալ, նա կարող է դի-
տել նրանց պարզ ու տաք գիշերները:



«ՀԱՍԿԵՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Քսան օր գետնի տակ	20 կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . .	20 »
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամփորդներ . . .	25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . .	25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պիես . . .	8 »
6. Ռ. Պառկանեան. Չախու	20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված Գայլը	10 »
8. Կլաւդիա Լուկաշեիչ, Քեռի Մկօ	20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու գիսաստղը	12 »
10. Կապուան. Ֆիօրէ փերին, Ասեղ	12 »
11. Իւանովիչ. Աւօհնց Ստեփանը	20 »
12. Կ. Լուկաշեիչ. Ծաղիկների մէջ	12 »
13. Աթ. Խնկոյեան. Աղւէսն ու արջը	20 »
14. Կենդանիների դոյները	15 »
15. Բրետ Հարտ. Մլիս	12 »
16. Է. Սիւօն-Տօմպսօն. Կախականջիկը . . .	12 »

0004321

ԳԻՆՆ Է 12 ԿՈՊ.

Գրմել՝ զրավաճառներին, կամ Թիֆլիս՝ Редація
„АСКЕРЪ“

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004321

